# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվականի N 1605 - Լ

## ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Սահմանամերձ տարածաշրջանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հաստատել սահմանամերձ տարածաշրջանների զարգացման 2021 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի, և այն սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1605 - Լ որոշման

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը | Կատարման պատասխանատուն | Ժամկետը | 2021 թ. ֆինանսավոր-ման աղբյուրը և պահանջվող գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին | Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալական պայմանների բարելավման նպատակով գազի, էլեկտրաէներգիայի և ոռոգման ջրի մասնակի փոխհատուցման և հողի ու անշարժ գույքի ամբողջական փոխհատուցման նպատակով գումարների նախատեսում | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2021 թ. | 2021 թ. ՀՀ պետական բյուջե<br><br>800,000.0 |
| **Ընդամենը** | | | | | **800,000.0** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ